ՀԱՆԳՈՒՍՏ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԹՈՒՃՅԱՆԻ
(1889—1958)



Հուլիսի 30-ին, շաբաթշաբթի օր, Վիեննայում վախճանվեց Ավստրիայի և Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետ Ութուճյանը։

Հանգուցյալը ծնվել էր Կոստանդնուպոլսում 1889 թվականին և իր նախնական կրթությունն ստացել էր Սկյուտարի Ներսես Երմոնյանի անվան դպրոցում, ապա շրջանավարտ էր եղել Գատրգյուղի Արամյան վարժարանից։

Հոգեշնորհ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետը երկար տարիներ ուսուցչական արդյունավետ գործունեություն է ունեցել Կոստանդնուպոլսի հայկական դպրոցներում, մինչև 1928 թվականը, երբ Նիկոմիդիայի և ապա Բուլղարիայի ծերունազարդ և պատկառելի առաջնորդ հանգուցյալ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից ձեռնադրվում է քահանա Սոֆիայի հայոց Մայր եկեղեցում, մայիսի 20-ին

1929 թվականին նշանակվում է Վիեննայի հայոց հոգևոր հովիվ և ձեռնհասորեն վարում է իր պաշտոնը։

1944 թվականին կորցնում է իր երեցկնոջը։ Հինգ տարի հետո, 1949 թվականին, ստանում է վեղար և մասնավոր վարդապետական իշխանություն՝ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանից։

Իր եկեղեցանվեր և արդյունավետ պաշտոնավարության համար 1951 թվականի հոկտեմբերին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան գերաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանի ձեռքից, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում։

Հանգուցյալը լանջախաչ էր ստացել հոգելույս Տ. Խորեն Կաթողիկոսից։ Նա մի ժամանակ վարել է նաև Բուդապեշտի հայոց հոգևոր հովվությունը։

Հանգուցյալը բարի, պաշտոնասեր և իր Աղգին ու Եկեղեցուն նվիրված հոգևորական էր։

Հանգի՜ստ նրա ոսկորներին և խաղաղություն՝ հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»։